



Լևոն Շանթ

Երագ օրեր

6

Օգոստոս 12

ամբողջ գիշերը անհանգիստ էի: քունս տարեր էր միայն առտուան դէմ: Եւ արթննալուս պէս միեւնոյն մտածումն էր գլխուս մէջ. մի՞թէ իմ բոլոր երեւակայածս օդի մէջ դղեակներ էին: իրա՞ւ է որ Վարդուհին ինձի չը՛սիրէր:

«Ոչ, սիրեր էո յ կսիրէ». կըսէր հոգիս: Այս պաղ վերաբերմունքը ցոյց մըն է, իմ երեք օրուան բացակայութեանս վրէժը: Այսօր կերթամ ու կհարթեմ այս բոլոր անմտութիւնները:

Այս որոշումով սովորական ժամին Շամիրեաննրոս պատշգամը ելայ: Անորոշ զգացում ը, վախի նման անհանգստութիւն մը շնչառութիւնս կխեղդէր:

Դէմս ելաւ սպասուհին:

- Բարե՛ւ, Մարո՛ւսեա: Իմա՛ց տուէք օրիորդին, որ եկած են:

- Օրիորդը պարոնին հետ շրջելու ելան. և պատասխանեց սպասուհին:

Կարծես պաղ ջուր լեցուցին վրաս:

- Ե՞րբ դուրս ելան. և հարցուցի կարելի եղածին չափ անտարբեր շեշտ մը առնելով:

- Կէս ժամ մը կայ, պարո՛ն:

Պարզ էր: Այդ աղջիկը հետս կխաղար: Եւ իր ըրածը պարզապէս անքաղաքավարութիւն էր: Վերջապէս իրեն հետ զբաղուելու կուգայի. եւ նախապէս գալս իրեն ըսեր էի:

Տուն վերադարձայ շատ ծանր հպոզկեան տրամադրութեան մը տակ: րՊարզ էր, որ աղջկայ կոզիին մէջ չկար զգացումներու այն խորքն ու բոցը, որ հիմա իմ էութեանս մէ կտիրէր: Բայց ես կխեղդեմ հոգիս եւ կփետտտեմ ե՛ւ սէրս, ե՛ւ բախտաւորութիւնս, եթէ աղջիկը միայն խաղալ կուզէ ինձի հետ: Ինձի կքաշեն ու ինձի կկապեն միայն խորունկ զգացումները:

Կուզէ ցաւէս խելագարիմ, կուզէ մոենիմ, ցաւագարիմ, միեւնոյն է, իսկոյն ամէն կապ կկտրեմ, եթէ իր սիրտը իմնիս զոյգ չի գարներ: Ես չեմ կրնար բաւականանալ կտորտանք զգացումներով եւ ծանծաղ երեսանց յուզումներով:

Պէտք է ամէն ինչ պարզուի. պէտք է ստուգուի եւ անմիջապէս ինչ գնով կուզէ ըլլայ:

Եւ իրիկուան դէմ սեղմուած սրտով, մտքերս խառնակ ու տրամադրութիւնս կտորտուած մտայ անոնց սրահէն ներս: Տիկինը մեքենայի վրայ կար կկարէր. հրացմուց, որ նստիմ:

Կխօսէինք շիտեմ ինչ, երբ ներսէն հնչեց Վարդուհիին ձայնը.

- Մայրիկ, կարմիր կագնով նոթաներուս ժողովածուն ո՞ր է:

Անշուշտ գիտէր եկած ըլլալս, բայց ինձի չտեսնել ձեւացուց. գնաց շիտակ գրքերուն դարակը: Վերջը հանկարծ ետ դարձաւ դէպի մայրը եւ իբրեւ ինձի նոր տեսնելով.

- Ա՛խ, դուք հո՞ս էք, պարո՛ն Երուանդ, և բացականչեց հանգիստ. եկաւ, ձեռքս թոթուեց, ինչպէս ըլլալս հարցուց եւ ելաւ սենեակէ, ն ինչպէս կրնեն սովորական ու ան կարեւոր հիւրի մը:

- Այլ չափը լեցաւ. վեր ցատկեցի ու գացի ետեւէն: Անիկա անշուշտ ոտքիս ձայնը առաւ, բայց չլսելու տուաւ ու մտաւ հիւրասենեակ. ես ալ ետեւէն:

- Ա՛, հրամանեցէ՛ք. և ըսաւ անփոյթ շարժումով աթոռ մը ցոյց տալով: և Նոթաներուս տետրակը չգիտեմ ո՛ր եմ դրեր: Ա՛խ, այս սպասուհին:

- Ձեր տետրակը այդ որքան յուզած է ձեզի, և ըսի զուսպ հեզնութեամբ մը:

- Այո՛, պէտք ունիմ. նուագել կուզեմ:

- Այն աստիճան, որ ձեր բարեկամին այցը կարծես չէք նկատեր:

- Ներսը հի՞ր է եկած. և հարցուց հանկարծ մեծ աշխուժով. և գրաւ կուզամ, որ նկարիչ Սիլիքոն է:

- Ո՛չ, դժբախտաբար կսխալիք. եկողը միայն ես եմ:

- Ա՛խ, ձեզի համար կխօսիք. և ինքզինքը սրբագրեց իր կորուստը փնտրելով:

Այս ցուցադիր անփութութիւնը մարսել չկրցայ: Չըլլա՛յ թէ բնագոյս սխալած չէ: Չըլլա՛յ թէ ճշմարիտ որ իր սրտին մէջ մէկ ուրիշը գրաւեր է այն տեղը, որ ես գրաւած ըլլալ կկարծէի:

- Նարեցէ՛ք, օրին՛րդ. վայրկեան մը միայն. և ըսի ես չքողարկուած դառնացումով: և Ձեր կորուստը կրնաք միշտ փնտրել. իսկ ես հեռանալէս առաջ հարցում մը ունիմ ձեզի:

- Ինչո՞ւ այդչափ կշտապէք. և հարցուց ձեռքերը ետելը կապած:

- Որովհետեւ ամէն կերպ հկասկցնէք, որ իմ ներկայութիւնս հոս աւելորդ է:

- Ես այդ տեսակ բան մտածած չունիմ: Բայց ի՞նչ էր ձեր հարցնելիքը:

- Ադետք գիտէի՞ք, որ այս առտու ձեզի հետ զբաղուելու պիտի գայի:

- Այո՛. երեկ գիշեր ըսիք կարծեմ:

- Լա՛ւ. ուրեմն ո՞ւր էիք առտուն:

Վարդրուհին ամբողջ հասակովը շտկուեցաւ, աչքերը շեշտ հառեց աչքերուս եւ առանց դէմքի մէկ գիծը շարժելու՝ ծանր ու յստակ ձայնով մը արտասանեց վանկելով.

- Որսի՛:

Դաշոյնի մը պէս բառը խրեցաւ կուրծքս: Քեն, գայրոյթ, կասկած ու հանդիմանութիւն վայրկենաբար ցնդեցան: մնացի անշարժ արձանի պէս: Իսկ Վարդրուհին լուռ անցաւ դաշնակին առջեւը ու սկսաւ նուագել. գիտէր բոլոր թոյլ կողմերս:

Ուրեմն վշտացած էր. իր բոլոր առերեւոյթ անտարբերութեան ու նոյնիսկ գուարթութեան հակառակ՝ ցաւած էր ինծմէ ու խորապէս:

Ու վայրեակն մը սուգուեցայ իր վիճակին մէջ. երեւակայեցի, որ ես եմ իր տեղը, որ կսիրեմ, որ ինքս դէմ կերթամ սիրած տղոս, գրեթէ կգրկեմ. իսկ ան կոպտութեամբ մէկ կողմ կիրէ ինծի եւ ալ ամբողջ օրեր կձգէ, կերթայ: եւ հիմա ալ կուգայ երեսիս դեռ հանդիմանութիւն կարդալու:

Խոր խղճահարութիւն մը բարձրացաւ մէջս հանկարծ, ծովու հողմակոծ ալիքներու նման. զգացի, որ ամենակոպիտ կերպով եւ կոշտ եսականութեամբ վիրաւորած էի այդ փափուկ ու չքնաղ արարածը, որ ինծի կնուիրուէր եւ որ սրտիս կեանք կուտար:

Դաշնակէն հոսող երագուն եղանակ մը զգացումներս ատլի կտրէր, զղջումս այն աստիճանին հասաւ, որ աչքերս արցունքոտեցան ու հանցաւոր տղու մը պէս ուզեցի երթամ ու ներում խնդրեմ: Բայց ասիկա մտածմունք մըն էր տեսական, որուն գործանակն կեպը պէտք էր գտնել:

Մօտեցայ դաշնակին ու թեթեւ մը ուսին դպայ. աղջիկը ցնցուեցաւ, ընդհատեց ու հարցական նայեցաւ ինծի: Ինչպէ՛ս գեղեցիկ էր:

Հոգիիս խորքէն կուզէի անհամար համբոյրներով ծածկեմ իր թեթեւ մը կծկուած շրթունքները, իր յուզումէն շիկնած այտերը, ամառուան երկնքին պէս մաքուր ճակատը եւ իր բնատրութեան նման անառակ խոպոպիկները: Կուզէի: Բայց իր նայուածքին մէջ լրջութիւն մը կար, որ սանձ կղնէր զգացումներուս. եւ ես չէի հանդգնէր գոնէ առաջուան չափ համարձակ վարուելու:

- Կուզէ՞ք, որ պտոյտ մը ընենք. և ըսի ես յաշտութիւն խնդրող ժպիտով մը

- Ուշ է. հիմա արեւըն այր մկտնէ. և պատասխանեց իր քենը պահել ուզելով:

- Ի՞նչ փոյթ. հեռու չենք երթար:

- Ձեզի նեղութիւն տալ չեմ ուզեր. և եղաւ իր բացատրութիւնը:

- Հերի՛ք է, թողե՛ք. և ըսի ես խոնարհ ու աղաչող ձայնով մը. և ելէ՛ք, երթա՛նք:

Առանց բառ մը արտասանելու ելաւ, ժակետը նետեց ուսերուն ու մեկնեցանք:

Նախ լուռ էինք: Մաքուր, մութնկապոյտ մըն էր վրանիս. հոս ու հոն ամպի ծուեններ հայեացքի միօրինակութիւնը կարելին:

Քովերնուս գիւղացի մը անցաւ, նայեցաւ մեզի ու նշանակալից կերպով ժպտեցաւ:

- Այդ մարդը ինչո՞ւ խնդաց. և հարցուցի:

- Ես ի՞նչ գիտեմ. իրեն հարցուցէք. և պատասխանեց աղջիկը:

- Թէեւ գիւղացին ալ, աղջիկն ալ, ես ալ շատ աղուոր իրար հասցեր էինք: Ամէն պարագայի գիւղացիին այդ ժպիտը խօսակցութեան ծայր տուաւ: Գիւղի կեանք, բարք, սովորութիւններ, գիւղի ու քաղաքի տարբեր հոգեբանութիւն: Կխօսէինք, Վարդուհին իր տպաւորութիւններն ունէր գիւղական կեանքի իր նախորդ տարիներու ամառնային օերերէն Կովկասի բոլորովին տարբերակներ անկիւններուն վրայ:

Ու կխօսե՞ինք շատ հանգիստ. կարծես նոր կծանոթանայինք իրարու. կարծես մեջերնիս ոչինչի անացծ չէր, ո՛չ հինը, ո՛չ նորը:

Միայն խօսյու ատեն, երբ քովնդի գաղտնի ակնարկ մը նետեցի իր դէմքին, հրճուանքով նշմարեցի, որ նոյն տեսակ ծածուկ նայուածք մը աչքերուս առջեւէն անմիջապէս խուսափեց:

Սկսաւ մթնել. անասող, սեւ մութ մը:

- Դառնա՛նք. և ըսաւ Վարդուհին:

- Դեռ կանուխ է: հեռու չենք տունէն:

- Քիչ մը հոգնած եմ. և առարկեց:

- Առէ՛ք թեւ:

Նայեցանք իրարու եւ սկսանք խնդալ. բայց եւ այնպէս մերժեց.

- Շա՛տ շնորհակալ եմ, հարկ չկայ:

Այս մերժումը դարձաւ մեր քեներուն վերջին կաթիլը. ու բաժակը հորդեց.

- Բայց պէտք է, որ մտնօք թեւ. և ըսի դաստակէն ամուր մը բռնելով:

Կեցաւ, երեսս նայեցաւ՝ վայրկեան մը մութին մեջէն եւ թող տուաւ, որ իր աղուոր ձեռքը թեւ անցնեն:

- Կգարմանամ միայն մարդկային հոգիի փոփոխութիւններուն վրայ:

Ա՛ս եղաւ իր ժպտուն փիլիսոփայութիւնը: Եւ իրաւ էր: Դերերնիս հիմնապէս փոխեր էինք. առաջ ինքը կուզէր բռնի թեւ մտնել, հիմա ես բռնի թեւ կառնէի:

Բայց այդ վարկեանին ես այլեւս անկարող էի այդ կարգի բաբակ բաներուն ականջ կախելու. բոլոր ուժովս սեղմեցի բազուկիս ու կրծքիս հանձնուած իր սիրելի թաթիկը:

Վարդութիւն սկսաւ նորէն խնդալ. ջղային, անբնական, խենթ խնդուք մը:

- Տո՛ւն դառնան, ք տո՛ւն դառնանք. և կրկնեց հանկարծ շատ լուրջ: ու թելը թելու ազատեց:

Կհասկնայի. նախորդ դէպքերը ինծի փորձառուէ ին ըրեր. ան ալ հիմա ինծի նման կփախչէր: տեղի տալ չէր ուզեր:

Իրենց սանդուղներուն ոտքը հրաժեշտ առնելու ատեն նորեն թելը բռնեցի:

- Ինծի հանգիստ ձգեցէք. և ըսաւ լուրջ, բայց չկրցաւ լրջութիւնը պահել ու խնդաց:

- Վրաս շա՞տ էք բարկացած. և հարցուցի ես:

- Ես բարկացած չեմ եւ ինչ իրաւունք ունիմ ձեր վրայ բարկանալու. և պատասխանեց խնդութիւն մէջէն:

- Այդպէ՞ս: Իսկ ինչո՞ւ կխնդար:

- Ո՛չ ալ կխնդամ. և պատասխանեց խնդութիւն մէջէն:

- Ատիկա պատասխան չէ:

- Դիցո՛ւք. ձեզի ին՝ թէ ինչո՞ւ բարկացած եմ կամ ինչո՞ւ կխնդամ: Ձգեցէ՛ք թելս:

- Չեմ ձգեր թելերնիդ մինչեւ պատասխան չտար:

- Բռնութի՞ւն:

- Անուանացէ՛ք ինչպէս կուզէք:

- Ի՞նչ տարօրինակ տղայ էք դուք:

Վայրկեան մը մտածեց ու հանկարծ ատելցուց ատելի հաշտ ձայնով.

- Աղե՛կ. ձգեցէ՛ք թելս. վաղ առաւօտ եկէ՛ք ձեզի պատասխանեմ:

- Կխոստանա՞ք: Չէ՞ որ առտուները որսի կելլէք. և ըսի քսմծիծաղ:

- Այո՛. օ՛ր մը, երկո՛ւ. ո՛չ յաւիտեան. ալ վերջացա՛ւ. և պատասխանեց աղջիկը երեկ իրիկուան բառերս ինծի վերադարձնելով վերին աստիճանի անուշ կատակով մը:

Երջանկութենէ յորդող սրտով երկու ձեռքերուս մէջն առի իր ձեռքը, կամաց մը բարձրացուցի ու սեղմեցի շրթունքներուս:

Ու մութին մէջ լուռ իրարմէ բաժնուեցանք առանց որեւէ ուրիշ բառի:

Օգոստոս 13

Դեռ բաւական հեռուէն նկատեցի, որ Վարդուիին պատշգամբ նստած խոշոր թերթ մը ոնհձ եռքը: Տեսաւ ինծի, բայց իր թերթէն աչքը չբարձրացուց ու տեղն չերերաց:

Մօտեցայ իրեն: Թափանցիկ ճերմակ շրջագգեստ մըն էր հգած, որուն բարակութեան տակէն յստակ կերելէին ի փղոսկրէ թելերը իրենց աբողջութեամբ Ժպտեցայ ու բարեեցի:

Չպատասխանեց, միայն թերթը վրաւ մեկդի, ելաւ ոտքի. ու միասին իջանք պարտէզ, ուր փայտէ սեղանին վրայ մզեի կսասէր «Դաւիթ Բէկը» մէկներովու տետրակներու ընկերակցութեամբ:

Երբ անցանք մեր բաղեղապատին ետելը՝ մատովը իմ սովորական տեղս ցուցուց: Նստեցայ, ինքն ալ դէմս:

Վայրկեան մը լուռ էինք ու կսպասէինք իրարու խօսքի: վերջապէս լռութիւնը ես խզեցի.

և Օրիորդ, խօստումնիդ:

և Ի՞նչ խոստում: և հարցուց մեծ զարմանքով:

և Պիտի ըսէիք, թէ ինչո՞ւ վրաս բարկացած էք:

Հիմա ես ձեզի պիտի ըսեմ ուրիշ շատ ասելի աղոտոր քան մը:

- Ի՞նչ քան է ասիկա: Կլսե՛մ:

- Պիտի ըսեմ, որ դուք չափազանց անհոգ, եսասէր ու անքաղաքավարի մեկն էք:

Այնքան անակնկալ էր, որ ոտքի ելայ ակամայ:

- Նստեցէ՛. – ըսաւ հանգիստ շեշտով մը: Ի՞նչ կանուանէք դուք այն տղան, որ աղջկան մը օգնել խոստանալով, օրերով կձգէ ու կանհետանայ: Եւ միթէ ձեր հիմար որսը ասելի՞ հետաքրքիր էր ձեզի համար, քան մեր այս միասին ըլլալը:

- Ամենեւի՛ն. և բացականչեցի ես կատարեալ սրտաբացութեամբ. և բոլորովին ընդհակառակը:

- Ի՞նչ կանուանէք դուք այն տղան, որ հանկարծ օձէ խայթուածի պէս կձգէ, կերթայ, երբ անոր կուրծքը մեխակ մը անցընել կուզեն:

- Այդ տղուն անունը «տխմար» է. և պատասխանեցի ես կատարեալ լրջութեամբ:

- Ի՞նչ կանուանէք դուք այն տղան, որ քիթ ու բերանը թիզ մը կկախի, երբ իր անշնորհքութիւնը իրեն հասկցնել կուզեն. եւ գայրոյթի ձեւեր կառնէ. ըսէ՛ք, այդ տղան ի՞նչ կանուանէք դուք:

- Անուանեցէ՛ք ինչևոր կուզէք, հանդիմանեցէ՛ք ինչպէս կուզէք. կատարեալ իրաւունք ունիք: Միայն թէ խօսեցէք, շարունակ խօսեցէք, որ լսեմ ձեր այդ աննման ձայնը: Նայեցէ՛ք ինձի մեղադրանքով ու բարկութեամբ, կատարեալ իրաւունք ունիք. միայն թէ նայեցէ՛ք ինձի այդպէս շարունակ, երբ ձեր աչքերուն մէջ յուզումը կվառի:

- Լուրջն ու ժպիտը հանկարծ խառնուեցան իրար Վարդուհիին դէմքին վրայ եւ շրթունքները վայրկեան մը շփոթեցան, չիմացան ինչ պատասխան տան: Բայց վայրկեան մը միայն ու եկաւ պատասխանը գարմանալի գգուող նայուածքի մը հետ:

- Գեղեցիկ խօսքեր ըսել գիտեք ուրեմն: Այդ բոլոր միայն հիմա՞ գգացիք:

Հագիւ էր նախադասութիւնը լրացուցեր, որ հանկարծ ձայնը կտրեց ու խոժոռած նայեցաւ ետ. խիճերուն վրայ քալուածքի ձայն կուգար:

Արագ մօտեցաւ սպասուիին:

- Ի՞նչ կայ. և հարցուց Վարդուիին:

- Պարոնին տունէն տիկինը մարդ է դրկած, որ պարոնը անմիջապէս տուն վերադառնայ. կարծեմ հիւր է եկած:

- Հի՞ւր. և կրկնեցի ես ակամայ ու սաստիկ դժգոհ: Ու վարանոտ կնայէի հեռացող սպասուիի ետեւէն առանց տեղէս շարժուելու:

- Ելէ՛ք, ելէ՛ք գացէք. արդեն ձեր ուզածն ալ երեւի աստիկա էր. և ըսաւ աղջիկը սրտնեղ:

- Սակայն այս անգամ, ա՛յ, անիրաւ էք, և ըսի ես խորապէս վշտացած ու քայլ մը ընելով դէպի իրեն՝ ինքս ալ չգիտեմ՝ ի՞նչ ըսելու կամ ի՞նչ ընելու համար, որ հոգիս արտայայտել կարողանամ:

- Գացէ՛ք. գացէ՛ք. և կրկնեց ան հրամայական շեշտով մը: և Դէպի ինձի անքաղաքավարի ըլլալը արդեն ձեզի սկզբունք էք շինած. գոնէ դէպի ուրիշները քիչ մը աւելի գգոյշ եղէք:

Ու քայլ մը քաշուեցաւ աւելի ետ, մեր մէջ եղած տարածութիւնը մեծցնելու համար.

- Գացէ՛ք:

Տեսակ մը վոնդուածի պէս ու պոչը կծկած շան մը պէս դուրս եկայ իրենց պարտեզէն. գազազած էի ինձմէ ալ, իրմէն ալ, մերիններէն ալ, եկած հիւրէն ալ:

Մեր ամառանոցին մուտքին առջեւը կեցած էր բաց կառք մը. ո՞վ պիտի ըլլար. հանկարծ ճանչցայ հօրեղբօրս կերպարանքը, որ կեցած էր ցանկապատին

կործանած. մէկ շունչով վար վագեցի:

Օգոստոս 14

Ուխտի: Մեւան կերթանք ուխտի: Եւ Վարդուհին հետս: Երագ է. ուրախութենէս
ինչ ընելս չգիտեմ:

Բայց կարգով:

Շօրեղայրս Թիֆլիսէն քանի մը ընտանիքներու համար հանձնարարութիւններ ու
կարգադրելիք բաներ ունէր. եւ ուրիշներու համար ալ բաւական մանրեմունք
բաներ էր բերած:

Իրիկուան դէմ այդ բոլոր իրերով բեռնաւորուած հօրեղբօրս հետ գացինք գիւղ
տունէստուն տնօրհնէքի պէս. ամէն տեղ ալ խօսք ու գրոյց, վերադարձանք
բաւական ուշ:

Մեր բացակայութեան տիկին Շամիրեան եկած էր հօրեղբօրս բարիկեկաք
ըսելու եւ Թիֆլիսէն նոր լուրերու: Տեսնելով որ շատ կուշանայ հօրեղբայրս՝
դարձեր է տուն, ըսելով որ այս իրիկուն այլեւս անհանգստութիւն պատճառել
չուզէր նոր եկած ճամփորդին, կուգայ վաղ ը առտու տեսակցելու:

Եւ այս առտու անհամբեր կսպասէի իրենց գալուն: Վստահ էի, որ Վարդուհին
միասին է գալու: Չսխալուեցայ. եկան ամբողջ ընտանիքով՝ մեծ ու գալտիկ:

Թիֆլիսի մասին երկար հարցուփորձերէն ետքը, խոսակցութեան ընթացքին
հօրեղբայրս յայտնեց, որ ինքը հիմա եկած էր յատկապէս Մեւանի կղզին
երթալու համար. կիրակի օրը Վարդավառ էր եւ Մեւանի վանքին ուխտի օրը: Ես
ալ դեռ բան մը չգիտէի. այր ու կին իրենք իրենց մէջ խօսեր ու կարգադրեր են: Եւ
առաջին տպաւորութիւնս աւելի զարմանք եղաւ, քան ուրախութիւն:

Բայց ուրախութիւնը իսկոյն ծայր տուաւ, երբ հօրեղբօրս կինը շատ լրջօրէն
առաջրակեց Շամիրեաններուն, որ միանան մեզի եւ միասին երթանք Մեւան
ուխտի: Շամիրեաններուն համար սկիզբը այնպէ՛ս, քաղաքավարական խօսք
մըն էր միայ, ն բայց եբր հօրեղբայրս ալ սկսաւ պնդել իր կնոջ առաջարկը եւ երբ

ես ալ ոտքովկգլխով մէջ նետուեցայ Սեւանի լիճն ու կղզին տեսնելու եւ գիւղական ուխտագնացութիւն մը մօտէն ապրելու գեղեցկութիւնն ու հետաքրքրութիւնը ընդգծելով նկարչի մը համար, տրամադրութիւնները փոխուեցան կարծես:

-Քիչ մը սկսան մտածել, վարանիլ, բայց ոչ երկար: տիկին Նատալինա կրօնասէր կին էր ու բարեպաշտ եւ մեր տիկնոջ հետ աղուոր պտոյտով ուխտի մը երթալը հրապոյր ունէր. պարոն նկարիչը, այո, Սեւանի լիճը տեսնել կցանկար, հարմա առիթ էր. Կանան սկսաւ ցատկրտել մօր գիրկն ի վեր, երբ լիսի ինկաւ, որ մէկներկու օրով կառքով պտոյտի մասին է խօսքը. իսկ Վարդուհին հարցը դրաւ շիփեշիտակ.

- Մամա՛, ես դեռ ուխտի չեմ եղած: կուգեմ, որ երթանք:

Մայր ու տղայ քիչ մը իրար երես նայեցան ու հարցը վճռուեցաւ. եւ հանկարծ բռնկուեցաւ ընդհանուր ոգետրութիւն մը: Գնումներ, կարգադրութիւններ, աշխատանքի բաժանում ուտելիքի պատրաստութեան համար. կառքերու հարցը հօրեղբայրս հանձն առաւ. որոշուեցաւ վաղը կէսօրին ճամփայ իյնանք. եւ Շամիրեանները մեկնեցան տուն:

Վարդուհին կատարեալ երեխայ էր դարձեր, իր փոքր քրոջ նման բան մը, կլխնդային, կխօսէին, կվագէին: Իմ ու իր աչքերը իրար կփնտրէին շարունակ եւ մեր նայուածքէն խոր ուրախութիւն կկաթէր. թէեւ հակառակ իմ քանի մը լուրջ ջանքերուս, խուսափեց հետս առանձին մնալէ եւ չպատասխանեց, երբ ծածուկ իր ձեռքը սեղմեցի. խռովկան կխաղար հետս:

Իրիկունը գացի Միքայէլը տեսնելու: առանց ոչինչ յայտնելու կարելի չէր մեկնիլ: իրենց տան դուռը կեցած՝ բռներ էր կովուն գլուխը մինչ քոյրը կկթէր:

Յայտնեցի մեր մեծ նորութիւնը, մեր ու Շամիրեաններուն ուխտագնացութիւնը, նոյնիսկ առաջարկեցի, որ ընկերանայ մեզի, թէեւ վախէն ձայնս դողաց, միգուցէ առաջարկս ընդունի: ԽՇնորհակալութեամբ հրաժարեցաւ: եւ ես չգիտէի՝ ինչո՞վ փոխարինեմ իր այդ աղուոր մերժումը: երախտագիտութեան պէս բան մը կզգայի ընկերոջս հանէպ: Իրարմէ բաժնուեցանք իրարու պայծառ Վարդավառ մը

մաղթելով:

Օգոստոս 17

Շաբաթ օրը կ'եսօրեն քիչ մը առա կառքերը մեր դռանն էին: Կառք մը մեզի համար, կառք մը Վարդուհիենց. իրաքանչիւրին մէջ ուրեմն չորսական հոգի. ամառանոցներուն տէր ու պահապան կմնային սպասուիհները:

Երկու կառքերուն մէջ ամեն ինչ տեղաւորելէն ու կակայելոյէն ետքը՝ երբ կարգը հասաւ նստելուն, ես բացեիբաց յայտարարեցի, որ նսելու եմ Շամիրեաններու հետ: Շօրեղբօրս կիներ քիչ մը առարկել ուզեց, թէ անոնք արդէն չորս հոգի են եւ թէ անոնց նեղութիւն պիտի պատճառեն: Շամիրեանները չորսը մէկնբերան քուեարկեցին ի նպաստ իմ առաջարկիս, ե՛ւ շատ կտրու, կ ե՛ւ շատ սիրալիր:

- Եկէ՛ք. ըսաւ Վարդուհին առանց այլեւայլութեան իր քովը նստած Կաեան գիրկը առնելով:

- Պայմանով, որ Կաեան գրկած պահելու պատիւը ինձի տրուի. և ըսի ես երեխան Վարդուհիի գրկէն առնելով:

Եւ երեխան ամբողջ ճամփու ընթացքին քանի մը անգամ գիրկէ գիրկ անցաւ եւ ամենուս գիրկերէն: Երկու անգամ ալ քոյր ու եղբայր իրենց տեղերը փոխեցին՝ ճակատը նստած ըլլալու պատիւէն ու համարութենէն զուր չկմնալու համար: Ինձի ալ առաջարկուեցաւ այդ պատիւն ու հանգստաւէտութիւնը, որ ես համեստ)րէն մերժեցի: Ինձի ցանակլի եղող ե՛ւ հարմարութիւնը, ե՛ւ բախտաւորութիւնը ես արդէն ունէի. Վարդուհին կա՛ւ քովս էր ամբողջ մարմնով ինձի սեղմուած, կա՛ւ դէմս էր ոտք ու ծունկով ինձի հենած եւ աչքերը աչքերուս:

ու զարմանալի կերպով իրենց կառքը բարձրացած վայրկեանէս կարծես բան մը փոխուեցաւ մեր յարաբերութեան մէջ. մտերմութիւն մը բոց առաւ հանկարծ. կարծես ընկանիքին անդամը դարձայ:

Տիկին Նատալիան մէկներկու անգամ ուղղակի անունովս կանչեց ինձի «պարոնը» մոռնալով: Պարոն նկարիչը երբեք այսպէս հարազատ չէի զգացած. ե՛ւ վարմունքը, ե՛ւ խօսուածքը: Եւ հրաշալի ալ տրամադրութեան մէջ էր. երբ

կառքերը Դելիշանի գիկզակներով վեր կմագլցելին՝ ինքը ոգետորուած կպատմէր մեզի առաջին անգամ իր Ռուսաստան անցնիլը Դարեալի կիրճով: կպատմէր մանրամասն ու համով, հիւսելով իր պատմածին քանի մը ծիծաղաշարժ արկածներ:

Մէկներով անգամ երգեցինք միասին: Կատեան խենթի պէսկպոռար երկու ձեռքերով վզիս փաթթուած: Ելքի դժուար մասը անցնելէն ետքը, սարահարթին սկիզբները՝ իշանք կառքերէն, ծառերուն տակը, ճոիկ աղբիւրի մը քովիկը թեթեւ նախընթրիք մը ընելու եւ ձիերուն հանգիստ եւ ուտեստ տալու կէս ժամուայ չափ:

Չիբուխլու գիւղը անցնելէն ետքը, երբ լեռնադաշտին մէջ խճուղին ոլոր մըն ալ ըրաւ՝ հանկարծ երեւցաւ դէմերնիս Մեւանի ծովուն երկնագեղ հայելին: Ամենքս հիացած կնայէինք եւ մեզմէ ամէնէն աւելի հիացածը մեր նկարիչը. իսկ հասակատրները ջերմեռանդօրէն խաչ կհանէին:

Քիչ մը վերջը ճամփան ծովուն գուգահեռ կերթար, ու դէպի ծովը կհաւասարէր կամացկամաց: Իրիկուն էր արդն. ու կդիտէինք լոյսերուն խաղը ծովու ալիքներուն եւ դէմի կղզիին ժայռերուն վրայ:

Մեւանի քովէն ես անցեր էի քանի մը անգամներ եւ միշտ ալ մեր այդ լեռնային ծովակը մեծ ուրախութիւն էր տուած ե՛ւ աչքերուս, ե՛ւ հոգիիս: Բայց այս անգամուան ստացած տպատրութիւնս բոլորովին ուրիշ բան մըն էր. մէյ մը Վարդուհիիս հարբած ու հիացած աչքերուն կնայէի, մէյ մը ծովու ծփանքներուն ու ցոլքերուն. ան ալ աչք մըն էր. անոր մէջն ալ կարծես Վարդուհիիս հոգին կար. ան ալ կժպտէր երեսիս:

Կառքերը կեցան ջուրէն ոչ հեռու: Առաջին գգացածս անուշ խշրտութ մը եղաւ եզերքէն, ուր ալիքն ու փրփուր քաղի էին ելած ափի խիճերուն հետ:

Քիչ մը հեռուն խմբուած էր գիւղացիներու ստուար խումբ մը, որոնք մեզի պէս ուխտի էին եկած իրենց կապոցներով: Քանի մը հրացան պարպեցին: ես ալ քանի մը գնդակ դրկեցի օդը արտճանակէս, որ կղզիէն նաւակները գան: Եւ իրաւ կղզիի մեզի դարձած կողմէն ու խորշի մը մէջէն ծառերուն տակէն երեք նաւակ բացուեցան քիթը բռնած դէպի մեզի:

Երկու ատելի խոշոր ու լայնափոր նաուակներուն մէջ լեցուեցան գիղացի ուխտատուները, ատելի փոքր՝ երրորդ նաուակին մէջ տեղաւորուեցանք մենք: Նաուակները ցամաքէն կտրուելուն պէս գունաշիները սկսան իրենց արեւելեան եղանակները մեր առջեւի նաուակէն: Պատուները երկիւղածութեամբ պղնձէ թասով ծավակին ջուրը կխմէին. երիտասար դաղջիկներ, իրենց երփներանգ զգեստներուն մեջէն, ուր տիրող գոյնը կարմիրն է, ր եւ իրենց երկար ու սեւ հիւսքերուն տակ գրաւիչ՝ մեզի կդիտէին հետաքրքիր, «քաղքցիները» ու «քաղքցի» աղջիկը, որ անոնց աչքին անշուշտ նախանձելի էակ մը կթուէր իր բարակ բացկարդագոյն շրջազգեստին մէջէն եւ իր կարճ մագերուն խոպոպիկներովը, որոնք հարդէ լայնեզր գլխարկին տակէն առատութեամբ ուսերուն վրայ կծփային:

Չունային սուր ձայնը քանի կերթար կսաստկանար. մեծ աղմուկ էր նաուակներուն մէջ. կխօսէին, կխնդային, կխմէին: Մերոնք լուռ էին ու կնայէին քաղքցու հպարտութեամբ:

Ես ալ կդիտէի այդ խումբը ու կզգայի, որ տարիներու մշուշին ետեւէն կվերակենդանանային հին ու սիրելի մանկական յուշեր ու պատկերներ աչքերուս ու հոգիիս դէմը: Կվերհիշէի մանկութեանս ուխտագնացութիւնը Ախթամարի կղզին: Ու կզգայի, որ տարտամ թախիծ մը, հաճոյք, ցաւ ու կարօտ իրար խառնուած կանձրելի հոգիիս մէջ:

Այդ խարխուլ նաուակները, ալիքներուն այդ ծփանքը, թմբուկին պինդ զարկերը, այդ կանացի խայտաբղետ արդուզարդը, այդ առողջ, արեւառ առնական դէմքերը, այդ հաստ ու բամբ ձայները, որ աշխատատրի ուժեղ կրծքէն կխուժեն, այդ բոլորը որքա՛ն ծանօթ ու հարագատ էր ինձի:

Երբ կղզի հասանք, մեզի դիմաւորեց հոգեւորական մը եւ առաջնորդեց վանքի ամենէն շնորհքով սենեակը, այսպէս ըսուած «պատուատուր» հիւրերէն էինք: Բաւական ընդարձակ պարզ ու մերկ սրահ մըն էր, որուն մէկ անկիւնը արդեն բռնած էր ուրիշ խումբ մը, գորգերը փռած ու տեղաւորուած:

Դիմացի անկիւնը, պատուհաններուն տակ բռնեցինք մենք եւ ըրինք միեւնոյնը: Մթնելու վրայ էր ադրեն: հօրեղբօրս առաջնորդութեամբ բոլորս միատեղ գացինք

տաճար սրբութիւնները համբուրելու:

Փոքր, մութ եկեղեցի մըն էր. խորանին առջեւ վառուող բազմաթիւ մանր լոյսերը եւ խլրտող բազմութիւնը, որ երկիւղած կաղօթէր, վրաս ազդեցին. անոնք ալ հարագատ կէտեր էին մանկութեանս յուշերէն:

Տիկիւնները մոմերնին վառեցին, աղօթեցին, լացին եւ երբ ամէն պարտաւորութիւն վերջացաւ՝ դուրս եկանք: Մեր ընթրիքը շատ կարճ տեւեց. ամենքը հոգնած էին. ծածկոցներու մէջ կերպ մը փաթթուեցան ու պատկեցան, առտուն կանուխ պիտի ելլէին ժամերգութեան ներկայ ըլլալու:

Վարդուհին, եղբայրն ու ես էլանք ուխտաւորներուն մէջ պտոյտ մը ընելու: Մենեակներուն առջեւ, հրապարակին մէջտեղը, ծառերուն տակ՝ ամէն կողմ խմբուած էին գիւղացիները: Հոս պզտիկներուն խժղուքը, գետնի մէջ փորած օճախներու վրայ փայտէ շամփուրներով դարձող խորովածին հոտը, մատաղներու պատրաստութիւնը եւ վանքի պաշտօնեաներուն իրարանցումը: Անդին երիտասարդներուն աշխոյժ պարը գոտնայի եղանակներուն տակ. քիչ մը անդին աղջիկներուն ազատախօս անուշ երգերը, ուր առիթէն օգտուելով կթափեն իրենց սրտի ամիսներով ծածկած յուզումը, կկանչեն «եարը» ու կգովեն:

Ամէն աղջիկ, երբեմն խմբով, երբեմն առանձին, սուր ու համարձակ ձայնով ու սրտին խորէն կերգէ իր իղձը. եւ ո՞վ գիտէ՝ մօտը կեցած երիտասարդներէն որուն հոգին կխոռովէ. եւ կտրիճը ալ չի դիմանար, ընկերներուն հետ կմիանայ աղջիկներու շրջանին: Շրջանը կմեծնայ, երգերը աւելի կշեշտաւորուին, սրտերը կալեկոծուին: Մանչ ու աղջիկ փոխնիփոխ կերգեն տունստուն բացարձակ իրարու հետ սիրաբանելով երաժշտօրէն. եւ պարը կդառնայ ու կդառնայ խենթ մտածման մը նման, որ ուղեղէդ դուրս չելլէր:

Մենք ու ուղղուեցանք ծառերուն տակէն դէպի ծովեզր. եւ պահ մը գիւղական երգերու եւ երաժշտութեան ընդհատումին մէջէն լսուեցաւ ծովուն անդորր ծփանքը եւ ոտքերնու տակի խիճերուն խշրտուքը: Լուսնի խոշոր մահիկը ծառերուն սաղարթին մէջէն լոյսի ցանց մը կնետէր ծովափին վրայ: Այդ ցանցին մէջ կաշկանդուած կքալէինք գրեթէ լուռ ու երագկոտ:

Երբ վերադարձանք մեր սրահին դուրը՝ նկարիչն ու քոյրը գիշեր բարի մաղթեցին ու մտան ներս պառկելու: Իսկ ես նստեցայ դռան սեմին վրայ. արմունկներս ծունկերուս դրած եւ դէմքս առած ափերուս մէջ՝ սկսայ նայիլ ու խորհիլ: Այն բոլորը, որ դէմս կպատկերանար այդ հինաւորց ծառերուն տակ, այդ բոլորը տեսած էի ես շատ թարմ տարիքիս իմ ծննդավայրս, հայրենիքիս մէկ ուրիշ անկիւնը: Արագ սկսան դուրս լող ալ յուշերուս ծովէն սուրբ ու մոռցուած տեղեր ու դէմքեր. սուր կարօտ մը արթնցաւ մէջս ու յուզումս հասաւ իր գագաթնակէտին:

Ամէն աչքէ հեռու, մինակ ու մութին մէջ ձգեցի ջիղերուս սանձը ազատ, առանց քաշուելու եւ արցունքներս սկսան հոսիլ:

Բայց սխալած էի. հանկարծ ստուեր մը երերաց դռան սեմին վրայ եւ մէկը նստեցաւ քովս.

- Ես ալ քուն չունիմ. և ըսաւ խնդալով:

Բայց լուսնի աղոտ լոյսին տակ երեւի արցունքս նշմարեց իմ քողարկումի ճիգերուս հակառակ եւ բոլորովին փոխուած ձայնով մըն էր, որ հհարցուց.

- Բայց ի՞նչ ունիք. ինչո՞ւ կուլաք. ինչո՞ւ էք այդպէս կծկուեր:

Երկու ձեռքով ամուր բռնեց թեւս ու սեղմուեցաւ ինձի:

- Ոչի՛նչ չկայ. և ըսի ես կէս մը ցաւով, կէս մը քնքշանքով: և Ջիղերու գրգռո՛ւմ եւ հին օրերու վերյո՛ւշ:

- Պատմեցէ՛ք ինձի ինչ որ հիմա կստածէիք, ինչ որ կզգայիք, ինչ որ ձեզի կլացնէր. բայց պէտք է պատմէք ամէն ինչ. և ընդգծեց ան վերջին բառերը:

- Խրթին բան մը չկայ, ո՛չ ալ ծածկելիք: Ես ալ ձեզի պէս ունիմ ծնող, եղբայր ու քոյրեր, որոնք չեն տեսր քանի՛ տարիներ. ունիմ հայրենի տուն մը, ծովակ, այգեստան, հեռո՛ւ ու հեռո՛ւ: Կմտածէի՝ ո՞վ գիտէ հիմա ինչ կընէ մայրս. ո՞վ գիտէ որքան հիմա մեծցա են քոյրերս, ամէն մէկը ձեզի պէս հասուն ու սիրուն աղջիկ մը: Այդ պարը կտեսնէ՞ք. գուցէ ասոր նման շղթայի մը մէջ կդառնան այս գիշեր քոյրերս ու իմիներս: Եւ այդ գիղական երգերն ու ոստումները, որ

արեւմտեան ճաշակին կրնայ մեծ բան մը շխօսիլ, իմ սրտիս ամէնէն զգայուն թելերուն կգարնէ: Իմ ժողովուրդիս սրտին ձայնն է ատիկա եւ անոր ուրախութիւնը. իմ սրտիս ձայնն է ատիկա:

- Այո՛, շիտա՛կ է, և վրայ բերաւ իսկոյն Վարդուհին: Ես արդեն սկսած եմ հասկնալ. դուք շատ էք հայ. մեծցած էք հայ միջավայրի մէջ եւ ստացած էք հայ կրթութիւն. ձեր հոգին չէ թռուած, շատ ատելի միաձոյլ էք: Իմ կրթութեանս մէջ շատ կան օտար գծեր, օտարով ոգետրութիւն, գուցէ եւ օտար զգացումներ: Ձեր կեանքը որոշ նպատակ մը ունի. դուք կեանքի մէջ որոշ բան մը կփնտրէք, դուք գիտէք, որ դեր մը ունի. հայ ըլլալու, հայութեան ծառայելու գիտակցութիւնը. ձեզի համար կեանքը կոշում մըն է. եւ ատոր համար ալ ձեր հոգին թոյլչք ունի. դուք թելեր ունիք. հայու թելեր. օտար ժողովուրդի թելերով մարդ չի կրնար թոյլի: Եւ ատով է բարձր ձեր հոգին:

Ես խորին զարմանքով ու խորին հաճոյքով քարացած՝ ականջ կդնէի իր ըսածին: Եւ զգացի, որ հպարտ եմ իրմով. զգացի, որ ոչ միայն կսիրէի այդ աղջիկ, ը այլ խորապէս կհարգէի:

Իմ այդ զգացումիս բնական արտայայտութիւնը եղաւ, երբ ըսի իրեն հիացումով.

- Չէք կրնար երեւակայել, թէ դուք ինքներդ ինչքան բարձր էք իմ աչքիս. եթէ իմ առաւելութիւնս իմ ատելի միաձոյլ կրթութեանս մէջն է, ձեր առաւելութիւնը ձեր հոգիի բնական նրբազգացութեան ու ինքնաբեր բարձրութեան մէջն է:

Վարդուհին խնդաց, կարծես քիչ մը իրեն անհարմար զգաց. կամաց մը ելաւ ոտքի եւ ըսաւ.

- ԳԻտէ՞ք ինչ կայ. քանի որ երկուքս ալ այսպէս հիացած ենք իրար բարձրութեամբ, լաւ է՝ այդ բարձրութեան վրան ալ մնանք եւ այդ բարձրութեան վրան ալ երթանք պատկելու: Գիշե՛ր բարի:

Եւ ոգիի մը նման ինչպէս ելեր էր դուռնէն, այդպէս ալ արագ ու թեթեւ սպրդեցաւ ներս:

Իսկ ես դեռ երկար կպտտեի դուրսը միայնակ: Ուխտատրները քայելեն, ցատկելեն ու խմելեն հոգնած՝ խմբովին փռուեր էին իրենց խսիրներուն ու կարպետներուն վրայ ամենատարօրինակ դիրքերով: Հոս ու հոն կլսուէր դեռ երգի մը մնացորդը, խօսակցութեան մը քայքայումը կամ գինովի մը պոռոտախօսութիւնները:

Վերջապէս ես ալ մտայ սենեակ: Լուռ էր ու կէս մը իջեցուցած լամպէն աղոտ լուսատրուած: Աչքս բնականաբար Վարդուհիենց բաժինը նետեցի: Վարդուհին մեծ շալի մը ծալքերուն մէջ փաթթուած կքնանար Կատեային կից: մագերը խառնակ ինկեր էին դէմքին. ձախ թեր մինչեւ արմունկը բաց՝ նետեր էր գլխուն վրայ:

Ես ալ տեղատրուեցայ մերիններուն քով՝ աչքերս այդ մերկ ու սիրելի դաստակին գամած: Չգիտեմ յոյն դիցաբանութեան ինչ գրքի մը մէջ դիցուիի մը պատկերը կհիշեցնէր. պատկած նոյն դիրքով, նոյն խառնակ մագերը ճակտին եւ նոյն ձախ թեր նետած գլխուն ետեր: Եւ երեւակայութեանս մէջ, ուր անշուշտ կէս բացած լամպի կիսատ լոյսը իր որոշ դերը ունէր, իմ Վարդուհին ու յոյն դիցուիին սկսան իրար ձուլուիլ գեղարուեստական հիանալի ամբողջութիւն մը առաջացնելով. միայն թէ հետզհետէ մտքիս մէջ ամէն բան սկսաւ աղոտանալ ու մշուշոտիլ

Եւ երբ նորեն աչքս բացի՝ այնքան պայծառ լոյս մը ինկած էր պատուհաններէն ներս, որ աչքերս շլացան, ստիպուեցայ գոցելու: Եւ առաջին մտածումս արմունկը եղաւ: Վարդուհին հոն չէր: Եւ ընդհանրապէս սրահին մէջ մարդ չկար: Բաց դռներուն առջեւը սեմին վրայ նստեր էր մեր նկարիչը եւ բան մը կնկարէր:

աշոյժ շարժումով պատկած տեղէս նստեցայ եւ նոր նկատեցի, որ վրաս ծածկեր էին հաւելեալ ծածկոցով մը. եւ որքան մեծ եղաւ հաճոյքս, երբ Վարդուհին կրկնոցը ճանչցայ: Դեռ ինքս ինծի հաշի չտուած՝ թէ այդ կրկնոցը ինչպէս էր վրաս նետուած, Վարդուհինիսքը ցատկելով ներս մտաւ սենեակ:

- Ա՛խ, արթնցե՞ր էք, պարոն ծո՛յլ. և խնդաց շիտակ ինծի գալով: և Մենք ճիշտ ժամ մըն է, որ ելեր ենք: տեսայ, որ պատկեր էք գրեթէ բաց՝ կրկնոցս վրանիդ նետեցի. շատ անգոյշ էք. և վերջացուց խօսքը ձեռքի թաշկինակը թեթեւ մը դէմքիս զարնելով:

Անուշ հոտ մը պարուրեց դէմքս ու անբացատրելի բախտատրութիւն մը հոգիս: Ուրախութենէ գինով ցատկեցի ոտքի: Եւ ալ ամբողջ օրը գրկած էր թութիւնս Վարդուհիի տուած բոյրն ու երջանկութիւնը:

Մինչեւ ճաշ ինչպէս անցաւ չգիտեմ: Երկու տուն խառնուած էինք իրար. ուտելիքի պատրաստութիւն, խօսք ու կատակ, երթելէ եւ ծովուն եզերքէն պզտիկ պտոյտ մը՝ որո՞ւ միջոցին մեր նկարիչը արագնարագ քորքիներ կվերցնէր: Իսկ ես ու Վարդուհին իրարու շուրջ կդառնայինք:

Ճաշէն ետքը երեքով՝ Վարդուհին, Եղբայրն ու ես՝ ելանք կղզին շրջելու, թէեւ տաք արեւը վրանիս իր բոցերը կթափէր: Բարձրացանք կղզիին գագաթը, ուր բաւական բազմութիւն կար: Իջանք լեռան հարաւայիննարեւելեան եզերքը, որ բոլորովին անայի է: Կմտնէինք ժայռերուն խոռոչները, կբարձրանայինք քարափները: Եւ ո՞վ գիտէ դարերէ ի վեր միայն սրբակրօն մենակեացի մը աղօթքին մրմունջները պահող ճգնարանները պահ մը կարճագանքէին Վարդուհիի հնչուն ու կենսութիւն ծիծաղին: Ու Վարդուհին ինքը ամբողջ թրթիռ էր, նագանք ու հմայք. գեղեցիկ ու կրակոտ կեանք մը:

Եղբայրը առտուան պէս կնստէր հոս ու հոն, իր նկարի տետրակին մէջ «յուշեր առնելու». հետըկպտտցնէր նաեւ իր ներկերուն տուփը, բայց օգտագործել չկրցաւ. կարծեմ անգամ մը միայն:

Արեւը մարը խոնարհելու վրայ էր, որ մենք նորէն բարձրացանք լեռան գագաթը: Գագաթը մարդ չէր մնացած. խարխուլ մատուռին շուրջը պարապ էր. ամենքը իրենց գիպերուան քեֆի պատրաստութեամբ էին զբաղուած վարը:

- Ի՞նչ գոյներ են. և բացականչեց ն կարիչը արեւմուտքին վրայ լեռան գագաթներու խումբ մը մատնանշելով, որ նարնջի ու մանիշակի արտաստվոր բաղադրութիւն մը կհորինէր, ամպերու շատ թեթեւ շղարշի մը ետեւէն:

- Վայրկեան մը նստեցէ՛ք, սա գոյները բռնեմ. և ըսաւ ոգեւորուած ու նստեցաւ ժայռի մը ցայտքին:

- Դուք բռնեցե՛ք ձեր գոյները, մենք ալ կերթանք մատուռը, և ըսի. և առտուն շատ բազմութիւն կար. շնորհքով շնօտեցանք:

- Քիչ մըն ալ բարձրացանք ու մտանք աներակ մատուռը: Բանուած լաթի մը վրայ ժանգոտ խաչ մը կար սեղանին վրայ. քովն ալ բզկտած կազմով Աւետարան մը. եւ ամէն կողմ սեղանին ու պատերուն փակցուած վառուած ու հանգած բարակ մումի մնացորդներ:

Տխուր էր: Խոնարհութիւն մը ըրինք ու ելանք դուրս:

- Երթա՛նք սա ժայռին ծայրը, և ըսի. և կարծեմ կղզիին ամէնէն բարձր կէտն է:

Եւ ուղղուեցանք մատուռէն ոչ հեռու ժայռակոյտը: Ժայռի պատռուածք մըն էր, աղուոր խորշ մը, միսսմէնակ, ետեւի աշխարհքէն կտրուած: Ղէմերնիս հեռաւոր արեւմուտքի լեռները, վարը ծովը ոտքերնուս տակ ու վրանիս կապոյտ երկինք:

Վարդուհիի հետ շատ էի մինակ մնացեր, բայց երբ օդային այդ խորշին մէջ աշխարհքէ կտրուած նստեցանք իրարու քով տափակ քարի մը վրայ, զգացի, որ սիրտս սկսաւ թայրտալ:

Եւ ճիշտ այդ վայրկեանին արեւը դիմացի Գեղարքունի լեռներու երկու սուր գաղգաթներուն մէջ մարը կմտնէր: Ամեհի, խոշոր ոսկի մը, որ ժամանակը ծանրնծանք ու դժուարով կմղէր իր օրերուն գանձանակը:

Ոսկին վերջապէս անյայտացաւ եւ արեան կարմիր մը ողողեց երկնակամարին այդ հատուածը. եւ ամպերու բամբակէ փեռեկտումներ այդ արեան մէջ թաթխուած իջան ու գոցեցին գանձանակին նեղ ան ցքը, ուրկէ քիչ մը առաջ ներս էր սահեր մեր օրուան արեւը:

Իսկ երկնքի այդ արիւնոտ հատուածէն անդին՝ որքան հեռու այնքան մութեանձր կապտագոյն կամար մը, որ իր գորշութեամբ բոլոր հայեացքդ կարմրին վրայ կեղրոնացնել կուտայ: Կարմիր մը, որ կցուլար ծովուն մէջ՝ մութեկապտորակ ջրի մակերեսին վրայ ծիրանի հեղեղ մը հոսեցնելով: Ծովու ու երկնքի այդ կարմիրը կն արտացոլէր կղզիի մեր շրջակայ ժայռերուն վրայ, մեր մեկուսի խորշին վրայ, մեր վրայ:

- Աստուած իմ, այ ի՛նչ գեղեցիկ բան է. և բացականչեց Վարդուհին ու ձեռքը կամաց մը դրաւ ձեռքիս վրայ: